

Սուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թիւ 190

Երբեմն իմանալ թէ որն է ճիշտ բանը անելու բաւականին բարդ է, քանի որ թէպէտ Աստուածաշունչը մեզ խիստ շատ սկզբունքներ է մատակարարում որով ապրել, սակայն այն չի տալիս մեզ բացայայտ պատասխաններ թէ ինչ պիտի անենք իւրաքանչիւր երեւակայելի պարագայում: Կան հարցեր ու իրավիճակներ որոնց մասին Աստուած ընտրել է չիօսել, եւ այդ հարցերում Տէրը ազատ է թողել մեզ հետեւելու մեր խղճերը՝ այսինքն գործածել իմաստութիւն ու զանազանութիւն, գործադրելով աստուածաշնչային սկզբունքներ, անելու այն ինչը որ մենք հաւատում ենք որ ճիշտ է եւ կրէրի փառք Աստծուն:

Մեղանչել է վարել խղճի հակառակ – Պօղոսը վարում է բարոյականապէս անտարբեր հարցերի նկատմամբ Հռովմայեցիս 14ում: Արդէն ուսումնասիրելով 1-13 համարները անցեալ դասում, այժմ դարձնում ենք մեր ուշադրութիւնը զլիսի մնացորդին: Պօղոսը 14-16րդ համարներում համամիտ է հասուն Քրիստոնէաների հետ՝ իր խիղճն նաեւ լուսաւորած եւ ազատագրած Քրիստոսի ուսուցումներով, եւ ուստի իր համար այդպէս բաները անմաքուր (պիղծ) չէին իրենք իրենցով (համար 22բ, Ա. Տիմոթէոս 4:1-5): Սակայն, նա նաեւ գիտէր որ տկար հաւատացեալները դեռ չէին հասկացել այդ ճշմարտութիւնը, եւ նրանց խղճերը դեռեւս կապւած էին իրենց տարակուսանքներովը (կասկածներովը), եւ ուստի նրանք չէին վայելում Քրիստոսում եղած նման ազատութիւն: Նրանց խնդիրը վարդապետութեան տկար ընթրումն էր (Ա. Կորնթացիս 8:7), եւ ուրեմն Պօղոսը ասում է որ եթէ նոյնիսկ մի բան ինքն իրանով պիղծ չի, սակայն «որեւէ մէկի համար որ այն պիղծ է համարում, այդ պիղծ է»: Առաւել, 23րդ համարում Պօղոսը ասում է որ երբ մի Քրիստոնէայ որը հաւատում է որ մի բան մեղք է բայց ապա անում է այն, նա մեղք է գործել: Նոյնիսկ եթէ այդ բանը մեղք չի, սակայն անձը արել է մի բան որը հաւատքից չի՝ այսինքն նա խախտել է իր խիղճը եւ արել է այն ինչ որ նա կարծում էր որ Աստուած արգելել է, եւ ուստի նա մեղք է գործել:

Այս շատ կարեւոր աստուածաշնչային սկզբունք է, որ երբ մենք անորոշ ենք թէ արդեօք մի բանը մեղք է թէ ոչ, մենք պիտի չանենք այն. եթէ ոչ, կ'անէինք մի բան որը խախտում է մեր խղճերը, եւ այսպիսով մեղք կ'գործէինք: Ուստի թէպէտ Պօղոսը համաձայն է զօրաւոր հաւատացեալների հետ, սակայն նա յորդորում է նրանց որ չգործածեն իրենց ազատութիւնը այնպիսի ձեւով որպէսզի վնասել կամ վշտացնել իրենց աւելի տկար եղբայրներին (20-21րդ համարներ):

Վայելել ազատութիւնը առանձնապէս – Որքան հնարաւոր է, հասուն Քրիստոնէաները պէտք ունեն լինեն զգայուն իրենց Քրիստոսում եղած տհաս ու սխալ տեղեկացած եղբայրների ու քոյրերի հետ: Հարկ է նրանց որ սիրել դրանց, համբերութեամբ հասկանալ դրանց, եւ կրել դրանց տարակուսանքները, որպէսզի չպատճառել անտեղի գայթակղութեան քարեր դրանց համար: Գործնականում այս նշանակում է որ տհասի ներկայութիւնումը, հասուն Քրիստոնէաներ պիտի անեն իրենց լաւագոյնը որպէսզի ինքնակամօրէն զսպեն իրենց ազատութեան գործադրումը այսպէս բարոյականապէս անտարբեր հարցերում (համար 22ա, Ա. Կորնթացիս 8:9-13, 10:28-29):

Հետապնդել խաղաղութիւն եւ միմեանց շինութիւն – Պօղոսը 17-19րդ համարներում ասում է որ Աստծոյ արքայութիւնը ոչ էական կամ հասարակ բաների առթիւ չի, այլ «արդարութեան եւ խաղաղութեան եւ Սուրբ Հոգով ուրախութեան» առթիւ է: Նկատի առնելով որ Պօղոսի նամակը ուղղւած էր բոլոր Քրիստոնէաներին Հռովմէական եկեղեցում՝ թէ զօրաւորին եւ թէ տկարին, նա կանչում էր հասուն հաւատացեալներին հետապնդել խաղաղութիւն եւ շինութիւն չօգտագործելով իրենց ազատութիւնը այնպէս կերպով որը կ'վնասէր տհասին. եւ նա նաեւ կանչում էր տհաս հաւատացեալներին հետապնդել խաղաղութիւն եւ շինութիւն չպարտադրելով իրենց անձնական կարծիքները եկեղեցու վրայ: Երբ մենք պատշաճ կերպով հասկանանք այս սկզբունքները, եւ ունենանք Քրիստոսում եղած մեր եղբայրների ու քոյրերի բարեկեցութիւնը որպէս մեր նպատակը, ապա այդ կ'առաջնորդի դէպի միմեանց սէր, եւ խաղաղութիւն ու միաբանութիւն եկեղեցում, եւ ի վերջոյ փառք ու պատիւ Աստծուն:

Ազատութիւն եւ ծառայութիւն – Մէկ ձեռքի վրայ, թէկուզ հասուն հաւատացեալները կոչւած են Քրիստոսում ունեցած ազատութեանը մէջ հաստատ կանգնեն (Գաղատացիս 5:1), սակայն նրանք չպիտի ցուցադրեն իրանց ազատութիւնը կամ գոռոզաբար ստիպեն իրենց կարծիքները տկարի վրայ՝ վնասելով դրանց հոգեւոր աճը. փոխարէն, նրանք կոչւած են համբերութեամբ զան տկարի կողքին եւ սովորեցնեն նրանց աստուածաշնչային սկզբունքներ այսպէս հարցերի առթիւ, խրախուսելով նրանց որ ճշգրտօրէն հասկանան իրենց Քրիստոնէական ազատութիւնը՝ գիտակցելով որ Աստուած աշխատում է նրանց մէջ այդ նպատակով (Առակաց 15:17, Հռովմայեցիս 15:1-3, Գաղատացիս 6:2): Միւս ձեռքի վրայ, թէկուզ տհաս հաւատացեալները ազատ են ունենալ իրենց անձնական կարծիքները, սակայն ակնկալութիւն կայ որ անտարբեր հարցերի վերաբերեալ նրանք դուրս աճեն սխալ տեսանկիւններից՝ Աստծոյ խօսքի ուսումնասիրութեան ու հասուն հաւատացեալների իմաստուն խորհրդի միջոցով, ուստի զարգացնելով իրանց խղճերը որպէսզի չկապեն իրենք իրենց ուր Աստուած ազատ է թողել նրանց: Միեւնոյն ժամանակ նրանք նաեւ չպիտի պարտադրեն իրենց կարծիքները եկեղեցու վրայ, ճնշելով եւ ուստի կապելով զօրաւորի խիղճը (Առակաց 18:2):